Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի
Մարալիկի <<Ռոմի Բարոնյանի անվան մանկապարտեզ>>
ՀՈԱԿ-ի տնօրենի 2026 թվականի փետրվարի« 5-ի N 24
կարգադրության

# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

## Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Մարալիկի <<Ռոմի Բարոնյանի անվան մանկապարտեզ>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության թափուր պաշտոնը զբաղեցնելու համար մրցույթ անցկացնելու մասին

| N | **Թափուր պաշտոնի անվանումը** | **Հավակնորդին ներկայացվող պահանջները (չափանիշները)** | **Մրցույթին մասնակցելու իրավունք չունի այն անձը, ով՝** | **Մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ փաստաթղթերը** |
|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 |
| 1 | Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Մարալիկի <<Ռոմի Բարոնյանի անվան մանկապարտեզ>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության<br>1. Մեթոդիստ – 1 դրույք /180000 ՀՀ դրամ աշխատավարձ/<br>2. Լոգոպեդ -1 դրույք /116000 ՀՀ դրամ աշխատավարձ/: | **1. Որակավորման պահանջները**<br>1.1 Հաստատության մեթոդիստի պաշտոն զբաղեցնողը պետք է ունենա՝ բարձրագույն մանկավարժական կրթություն և վերջին տասը տարվա ընթացքում նախադպրոցական կրթության ոլորտի աշխատանքի առնվազն երեք տարվա մանկավարժական գործունեության ստաժ:<br>1.2 Հաստատության լոգոպեդի պաշտոն զբաղեցնողը պետք է ունենա բարձրագույն մասնագիտական կրթություն:<br><br>**2. Ընդհանրական պահանջները**<br>Նախադպրոցական ուսումնական հաստատության մեթոդիստի, և լոգոպեդի պաշտոններ զբաղեցնողները պետք է իմանան պաշտոնի նկարագրով ամրագրված լիազորությունները.<br>ա. դաստիարակչական հարցերը, ըստ ոլորտի՝ նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշիչը, նորմատիվ փաստաթղթերը և մեթոդական հանձնարարականները, մանկավարժության, հոգեբանության, տարիքային ֆիզիոլոգիայի և հիգիենայի, առաջին բժշկական օգնության հիմունքները, աշխատանքի անվտանգության, երեխաների կյանքի և առողջության պահպանման կանոնները: | **Մրցույթին մասնակցելու իրավունք չունի այն անձը,** որը՝<br>1) դատական կարգով ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ.<br>2)դատական կարգով զրկվել է մանկավարժական գործունեությամբ զբաղվելու իրավունքից.<br>3)տառապում է ՀՀ կառավարության կողմից հաստատված այնպիսի հիվանդությամբ, որը կարող է խոչընդոտել մանկավարժական գործունեության իրականացմանը.<br>4)դատապարտվել է հանցագործության համար և | Մրցույթին մասնակցելու համար դիմած քաղաքացին փաստաթղթերը ներկայացնում է անձամբ՝ անձնագրով կամ անձը հաստատող այլ փաստաթղթով:<br>1) դիմում (Ձև 1).<br>2) կրթության մասին փաստաթուղթ (դիպլոմ).<br>3) անձը հաստատող փաստաթուղթ.<br>4) աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք կամ աշխատանքային գրքույկ (առկայության դեպքում).<br>5) ինքնակենսագրություն (Ձև 4).<br>6) մեկ լուսանկար՝ 3x4 չափի.<br>7) այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | դատվածությունը սահմանված կարգով հանված կամ մարված չէ, բացառությամբ այն դեպքերի, երբ դատապարտվել է ոչ դիտավորյալ հանցագործություն կատարելու համար: | աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ. 8) Հայաստանի Հանրապետության արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինվորական գրքույկ կամ զինվորական կցագրման վկայական. 9) հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (դրանց առկայության դեպքում): |
| 2 | **Մրցույթն անցկացնելու վայրը, օրը, ժամը** | **Դիմումների և փաստաթղթերի ընդունումը**<br>ՀՀ Շիրակի մարզ, Անի համայնք, ք. Մարալիկ Չերժինսկի 7-7/7 մանկապարտեզ | | **Դիմումների և փաստաթղթերի ներկայացման ժամկետները** |
| | **Վայրը`** ՀՀ Շիրակի մարզ, Անի համայնք, ք. Մարալիկ, Չերժինսկի 7-7/7 մանկապարտեզ<br>**Օրը`** 2026 թվականի մարտի 10-ին<br>ժամը` 11:00 | Փաստաթղթերը ներկայացնելու և լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար դիմել ՀՀ Շիրակի մարզի Անի համայնքի Մարալիկի <<Ռոմի Բարոնյանի անվան մանկապարտեզ>> ՀՈԱԿ<br>**Հեռ. 077-122-800**<br>**Էլ. հասցե`** **mankapartez2023@gmail.com**<br>**Մրցույթն անց է կացվելու 2 փուլով` գրավոր և բանավոր:**<br>**Հարցաշարին ծանոթանալու համար կարող եք անցնել հետևյալ հղումով`** **https://escs.am/files/files/2024-10-23/cabaf0475d7f79ebda1d3b036d05e5d0.pdf** | | **2026 թվականի փետրվարի 6-ից մինչև 2026 թվականի մարտի 5-ը ներառյալ** |
| | **Մրցույթին ներկայանալ անձը հաստատող փաստաթղթով** | **Փաստաթղթերի ընդունումը` ամեն օր, ժամը 09:00-18:00, բացի շաբաթ, կիրակի և օրենքով սահմանված ոչ աշխատանքային օրերից:**<br>**Մրցույթին մասնակցել ցանկացող քաղաքացիները կարող են հայտարարությանը հետևել anicity.am** **http://shirak.mtad.am** կայքում: | | |